ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև թմրադեղերի հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության նամակ-համաձայնագրում 16-րդ փոփոխությունը կատարելու մասին» արձանագրության սպորագրման նպատակահարմարության մասին

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև թմրադեղերի հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության մասին» նամակ-համաձայնագրում առաջարկվող 16-րդ լրացումը կատարելու մասին Արձանագրություն կնքելու նախաձեռնությամբ հանդես է եկել Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարությունը:

Արձանագրության համաձայն ԱՄՆ Կառավարությունը լրացուցիչ ֆինանսավորում է տրամադրում Հայաստանի Հանրապետության Կառավարությանը հետևյալ ծրագրերի համար. մշտական իրավական խորհրդատուի ծրագիր (700.000 ԱՄՆ$), իրավապահ ոլորտի զարգացման ծրագիր (380.000 ԱՄՆ$), Ամերիկյան փաստաբանների ընկերակցության իրավունքի գերակայության նախաձեռնության (ԱՓԸ/ԻԳՆ) քրեական իրավունքի բարեփոխումների ծրագիր (52.000 ԱՄՆ$), քրեակատարողական հիմնարկների զարգացման ծրագիր (380.000 ԱՄՆ$), մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագիր (189.000 ԱՄՆ$):

Նախատեսվում է նաև 641.000 ԱՄՆ$ արժողությամբ հավելյալ ռեսուրսներ և ծառայություններ ապահովել՝ ՀՀ կառավարության արդարադատության համակարգի ամրապնդմանն ուղղված ծրագրերի ձևավորմանն ու օժանդակմանը. Փրոջեքթ Հարմոնի իրավական սոցիալականացման ծրագիր (241.000 ԱՄՆ$) և Ամերիկյան փաստաբանների ընկերակցության իրավունքի գերակայության նախաձեռնության (ԱՓԸ/ԻԳՆ) քրեական իրավունքի բարեփոխումների ծրագիր (400.000 ԱՄՆ$):

Ընդհանուր հաշվով Հայաստանի կառավարությանը կտրամադրվի 2.342.595 ԱՄՆ դոլարի ($1.701.595+$641.000) չափով լրացուցիչ ֆինանսական աջակցություն, ինչը լուրջ խթան կհանդիսանա ՀՀ քրեադատավարական օրենսդրության կատարելագործման, ՀՀ դատախազության և մյուս իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ բարեփոխումների, ինչպես նաև անդրազգային հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համար:

2001թ. հունիսի 11-ին կնքված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև թմրադեղերի հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության մասին»

նամակ-համաձայնագրի և կատարված 15 լրացումների համաձայն, Հայաստանի Հանրապետության Կառավարությանը հատկացվել է շուրջ 20.241.000 ԱՄՆ դոլարի չափով լրացուցիչ ֆինանսական աջակցություն:

Ելնելով վերը նշվածից, նպատակահարմար է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև թմրադեղերի հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության մասին» նամակ-համաձայնագրում առաջարկվող 16-րդ լրացումը կատարելու մասին Արձանագրության ստորագրումը:

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազություն
07.07.2014թ.